


նեցրած արտաքին ձեւերը. թող իւրաքանչիւր եկ-
համայնք գործէ ինչ եղանակով կուզէ, միայն թէ
անձնուէր սիրով լինի գործածն, ինչպէս այստեղ:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ԻՆՉՊԷՍ ՊԷՏԻ Է ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ
ՀԱՒԱՏԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ.

ԱՐԱՐԱՏԻ մայիս 5-ում մենք աշխա-
տեցինք լուրջ ուշադրութիւն հրաւիրել այն
տխուր վիճակի վերայ, որ մեր ժողովրդի
կրօնական—եկեղեցական կեանքն է ներկա-
յացնում. քայց զոր չէ արդեօք առհասա-
րակ այսպիսի խնդիրներ արծարծելու համար
թափած աշխատանքը: Չէ որ միեւնոյն է.
ինչ կուզես խօսիր, դիմացինդ իւր հին երգն
ունի, որ պէտք է երգէ, եւ ո՛չ մի պատճա-
ռաբանութիւն թեր լինի թէ դէմ: Նորան
կանգնեցնել կամ ծայրը փոխել տալ չի կա-
րող. նորա միտքը քան հասկանալ ու հաս-
կացնել չէ, այլ միայն իւր շնորհքը, իւր ծայրի
գործութիւնը ցոյց տալ: Մի անգամ ընդ միշտ
որոշուած է, որ աշխարհիս բոլոր մտածուած
ու շմտածուած յանցանքների մէջ մեղաւորը
ԻՆՉ Է. ուրեմն երբ խօսքը կրօնի եւ եկե-
ղեցւոյ մասին է՝ կարելի է առանց այլեւայ-
լութեան մի շարք ԻՆՉԻՆՉ մեղքեր թուել,
եւ ամէն բերան փակուած կլինի: Հազար ա-
ռա թէ այլ բոլորն իմացանք. ընդունում
ենք, որ մենք ԻՆՉԻՆՉԻՆՉ, աստուծոյ հետ
շատ մեղքեր ունինք՝ արածի համար էլ ենք
մեղաւոր, շարածի համար էլ թէկուզ նորա
համար էլ, որ ջրերը ցամաքել են, երկնքից
անձրեւ չի գալիս. խօսքը դորա մասին չէ,
մեզ արդարացնելու մասին այլ թէ ինչպէ՞ս
մի ընդհանուր շարիք մէջ անդից պէտք է վե-
րացուի: Դուք առաջուց գիտէիք, մենք այժմ
ենք իմացել. շատ անգամ ասել էք՝ չենք լսել

այժմ՝ պատրաստ ենք լսելու. այժմ էլ չենք
լսում՝ մեզ մի նայէք, դուք ուղիղը ցոյց տուէք եւ
արէ՛ք, կամայ ակամայ ետեւից կգանք: Բայց
ո՛ւմ կասես... Դուք կղերականներդ... դուք
աստուածաբաններդ... դուք...:

Եւ այնտամենայնիս խօսել ու խորհրդա-
ծել պէտք է այս խնդիրների մասին: Այո՛,
մենք ասել եւ պնդում ենք, որ եթէ եկե-
ղեցւոյ վարիչների դէմ եղած բողոքները լսելի
չեն եղել եւ նոցանից պահանջուած քարենո-
րոգումները զուիւ չեն եկել՝ մի գլխաւոր պատ-
ճառն այն է, որ իրենք բողոքողներն ու պահան-
ջողները պարզ գաղափար չեն ունեցել, թէ
ինչ են պահանջում եւ ո՞ւմնից: Մեր պահան-
ջող ու քննադատող երիտասարդութիւնը իւր
կրթութիւնն ստացել է օտար դպրոցներում եւ
ինչ որ այնտեղ դուրսը մի որոշ ժամանակամի-
ջոցում՝ իբրեւ նորագոյն ճշմարտութիւն քա-
րոգուել է՝ նորա համար պատգամ է դարձել,
եւ նա շատ անգամ՝ դեռ հասարակական աս-
պարէզ չելած՝ աշակերտի կամ ուսանողի
նստարանի վրայից սկսել է այդ պատգամը հըն-
չեցնել ի սփիւռս Հայաստան աշխարհի եւ
պահանջել, որ իւր խաւարի մէջ մնացած
հայրենակիցներն ի բթթել ական լուսաւո-
րուին, նոր ճշմարտութեան ցոյց տուած ճա-
նապարհով գնան: Վաթսուհական թուական-
ներին ընդհանուր ազատամտական ուղղու-
թիւնն էր իշխում, եւ ահա ազատամտական
գաղափարներ հեղեղեցին ու մի քանի տաս-
նեակ տարիների ընթացքում ողողեցին մեր
երկիրը. այժմ համայնական խնդիրն է լու-
սաւոր Եւրոպայում սպառնալից զուիւ քար-
ծրացրել եւ արդէն առատութեամբ ցանում
են մեզանում՝ այն արմատական մտքերը,
որոնք բուն աննպակայրում դեռ արմատ չեն
բռնել: Բաւական է որ մի միտք — — — — — լինի.
ո՞վ է հարցնում՝ այլ եւս, թէ որչափ իրօք
ճշմարիտ է այն, որչափ իրագործելի մեզ
տուած պայմաններում:

Զատասուն տարի առաջ պահանջեցին,
ասում են, որ աւետարանն աշխարհաբար
թարգմանուի: Ինչո՞ւ մինչեւ այժմ՝ չթարգ-
մանուեցաւ. մենք եւս հարցնում ենք ինչո՞ւ:
Մտածել էր արդեօք Մոսկուայում նստած
պահանջողը, թէ ո՞վ պէտք է թարգմանէ, եւ

միջոցներ ցոյց տունէ՛ր. գիտէ՛ր թէ ինչ կարողութեան տէր մարդիկ են նստած իւր մայրենի եկեղեցոյ հոգեւոր վարչութեան կենդրոնում՝ եւ նպաստել է իւր կողմից որեւէ կերպով որ հանդէս կար այնտեղ այդպիսի ծանր գործ իւր վերայ առնելու ընդունակ մէ՛կը: Պահանջն էն -- բողոքել են ... շատ մեծ քան են արել: Իսկ ո՞վ է լրջօրէն ուսումնասիրել թէ ինչ ողորմելի վիճակի մէջ էր Մայր Աթոռը, ամբողջ Հայոց եկեղեցին իւր վարչական եւ դատախարակական կազմութեամբ այն ժամանակ, երբ ուսական հօգը արծուի հովանին մեր երկրի վերայ տարածուեցաւ. ո՞վ է հաշիւ տուել իրեն, թէ մի դարաւոր հաստատութիւն այդպիսի վիճակից բարձրացնելու եւ ժամանակի պահանջներին յարմարեցնելու համար որպիսի՞ ջանք: քանի՞ տարիների աշխատանք է պահանջուում, որ հրապարակախօսը վերջապէս, կամ՝ բողոքողն ու պահանջողը ջանք ու աշխատանք է գործ դրել իւր մատնացոյց արած չարիքները վերացնելու: Եթէ մի քան արուել է, էլի եկեղեցին է արել՝ նորա աչքի ընկնող ներկայացուցիչներն են արել, եւ ուղիղ աչքով նայողը կտեսնէ որ համեմատաբար քիչ քան չեն արել: Մի՞թէ՛ նոյն իսկ աւետարանի աշխարհաբար թարգմանութիւն չի ձեռնարկուել, եւ ձեռնարկողը չի եղել եկեղեցոյ հովուապետներից մէ՛կը՝ իւր անձով իւր մեծ գործերովն ու նոցա ակներբեւ արդիւններով յանշափս բամբասուած մի հովուապետ: Ձեռնարկելը նշան էր, որ ամենեւին ցանկութիւն չէ պակասում՝ իրաւացի պահանջների բաւականութիւն տալու. ձեռնարկութեան անյաջող ելքն ապացոյց է, որ աւելի շատ պահանջներ ունինք, քան պահանջը լրացնելու կարողութիւն:

Բայց մենք այսպիսի ձեռնարկութիւններ չենք տեսնում: ցանկութիւն չունինք մատի ծայրով անգամ՝ նոցա յաջողութեանն օգնելու եւ եկեղեցոյ ծոցում՝ ինքնաքերաբար ու անզգալի կերպով կատարուող բարեփոխական շարժման նպատտելու. այլ ամէն մի ապիկար քահանայի կամ՝ բաղդի բերմամբ բարձր աստիճանի հասած եւ իւր կոչումն ի չար գործ դնող եկեղեցականի արարքը իբրեւ փաստ ենք առնում: յաճախ նոյն իսկ առանց որ եւ

է փաստ ի նկատի ունենալու՝ գոռում՝ եւ գոչում: Թէ հոգեւորականութիւնը ոտքից մինչեւ գլուխ անպէտք է, թէ բոլորին մէջ տեղից քշել ու եկեղեցոյ գաւիթը հասարակութեան ինքնակոչ առաջնորդների գթօսավայր դարձնել պէտք է: Եւ այսպէս գոչողների համար փաստերից աւելի զօրեղ է գուցէ ասպարիզին կատարեալ տէր լինելու ջերմ՝ փափագը: Նորա ամենեւին չեն էլ քաշուում՝ յայտարարելու, որ եթէ հոգեւորականների զոյութիւնը առ ժամանակ պահպանել անհրաժեշտ է՝ այդ եւս այն պայմանով միայն, որ իրենց խոնարհ սպասաւորները լինին, իսկ իրենք, յանուն ժողովրդի՝ աէրեր: Այսպիսի փափագ միշտ եղել է՝ աւելի շատ գուցէ հէնց այն ժամանակներում, երբ հոգեւորականութիւնն իւր կոչման բարձրութեան վերայ է գտնուել, որովհետեւ նորա իսկական շարժառիթը այն քնական հակառակութիւնն է, որ բոլոր մարդոց մէջ կայ դէպի զաղափարական—բարոյական պահանջը եւ նորա ներկայացուցիչ անձնաւորութիւնները: Ինչպէս որ անհատական կեանքում մենք կկամենայինք, որ կարելի լինէր բարոյականը մեր մարմնական, եւական ցանկութիւններին յարմարեցնել ու հպատակեցնել, այնպէս էլ հասարակական կեանքում՝ տրամադրութիւն կայ զանա. շան պատրուակների ներքոյ զաղափարականի ներկայացուցչին կասկածելի ներկայացնել, որպէս զի քնական մարդը իւր հակումները իւր համար զաղափար դարձնէ եւ նոցանով առաջնորդուի: Սակայն յայտնի է, թէ դերերի այսպիսի փոփոխութիւնը ինչ հետեւանքներ կունենայ: Ծշմարիտ հոգեւորականի համար սկզբունք պէտք է լինի Առաքեալի ստածը. «Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Զրիստոսի ծառայ ո՞չ էի»—եւ բաւական է որ նա այս սկզբունքից շեղուեց ու մարդոց ծառայել սկսեց՝ ի՞նչ մարդու եւ ի՞նչ նպատակով կուզէ լինի—գրկուած պէտք է համարուի իւր կոչումից եւ անհամ աղ դարձած, որ ոչինչ օգուտ տալ այլ եւս չի կարող, այլ ոտքերի տակ տորոտելով միայն ապականութիւն յառաջ կրերէ:

Հարկաւ եթէ մարդոց ծառայելը հոգեւորականի պարտքը չէ՝ մարդոց վերայ իշխան

եւս նորա իրաւունքը չէ ամենեւին. Բրիտոս ինքը քացարձակաբար դատաւարտել է իշխանութեան ծգտումը հոգեւորականութեան մէջ, եւ այդ ծգտումը կարելի է ասել աւելի կործանիչ է եւ ապականաբար, քան ծառայելու թուութիւնը. Այս ծգտումից է սկիզբ առնում ինչպէս ուրիշ անգամ՝ եւս քացատրել ենք, բուն կղերականութիւնը, եւ ուր նա կայ՝ պէտք է յիշաւի արմատից խելել որպէսզի կղերական չար ոգին չզարգանայ. Դորա հետ շատ հեշտ է շփոթել հոգեւոր կոչման համար ունեցած նախանձախնդրութիւնը, որով եկեղեցւոյ պաշտօնեան՝ Բրիտոսի ծառան աշխատում է իւր Տիրոջ իշխանութիւնը հաստատել այս երկրի վերայ. Եւ ինքը՝ հաւատարիմ՝ պաշտօնեան, հեզ եւ խոնարհ է մնում ինչպէս էր իւր Տէրը, պատրաստ ամէնքին ծառայելու, քայց միայն յանուն Բրիտոսի եւ յանուն Բրիտոսի հպատակութիւն պահանջելով ամէնքից. Այն հանգամանքը, որ կարելի է յանուն Բրիտոսի պահանջել, եւ իւր համար գործ դնել իրաւունք չի տալիս սնդելու, թէ ամէնքն այդպէս կվարուեն եւ թէ ուրեմն պէտք չէ թոյլ տալ ոչ ոքի այդպիսի կոչումն ստանձնելու. Ո՛րպիսի կոչում, որպիսի սրբութիւն, որպիսի գաղափար չար չէ գործ դրուում՝ աշխարհում, եւ մի՞թէ սրբութիւնը սրբութիւն եւ գաղափարը գաղափար լինելուց դադարում է, երբ ի չարն են գործ դնում՝ այն. Ամենեւին. — Մեր եկեղեցւոյ համար յատկապէս կարելի է պարզերես ասել, որ նա հաւատարիմ իրենց կոչումն ըմբռնող պաշտօնեաներ միշտ ունեցել է, եւ կղերական ոգին նորա մէջ երբէք իշխող չի եղել. Մեր պատմութեան այլեւայլ շրջաններում՝ կղերականի ուրուական որոնողներն ու այժմ՝ եւս այսպիսի ուրուականից վախեցողները նորա են, որոնք խաւարի մէջ են շրջում՝ գլուխները լի հազար ու մի նախապաշարումներով. Արեւի լուսով ու յստակ աչքով պատմութիւն կարդացողը այնտեղ Բրիտոսի հաւատարիմ ծառաների մի փառաւոր շարք է տեսնում, որոնք միեւնոյն ժամանակ իրենց հօտի անձնադիր հովիւներ են, նորա ցաւն ու կարիքները զիտեն եւ դարման տանելը իրենց կեանքի

խնդիր են դարձրել. Եթէ այդպիսի հաւատարիմ ծառաներ վերջին ժամանակ աւելի պակաս են երեւացել (քոլորովին ի հարկ է չեն սպառել. մինք ենք որ չենք տեսնում՝ եղածներին) պատճառներն այլ են, քան սովորաբար կարծում ենք, հարկաւոր է նախ մի զօրեղ ներքին պատճառի վերայ ուշադրութիւն դարձնել, միւս արտաքիններն իրենք իրենց կցրուեն. — հարկաւոր է մաքուր հաւատ, հարկաւոր է Բրիտոսի հոգին վերականգնել եւ սնուցանել.

Ի՞նչպէս եւ ի՞նչ միջոցով — այդ մասին վաղուց արդէն եկեղեցւոյ վարիչները մտածել են եւ գործ սկսել, մինչ Երաւարդեան օղային ամբողջներ փլուցանելով եւ կառուցանելով էին զբաղուած. Այն օրուանից, երբ հայ ժողովուրդը ոտք է դրել քաղաքակրթութեան մի նոր ասպարիզի վերայ՝ հայ եկեղեցականութիւնն եւս զգացել է, որ նոր խնդիրներ են ծագում իւր համար եւ պէտք է մարդ պատրաստել նոր պայմանների մէջ գործելու. Եւ ահա այն եկեղեցականը, որ ամէնից աչքի ընկնող անձն էր ժամանակի ոչ միայն հոգեւորականութեան այլ եւ ամբողջ ժողովրդի մէջ եւ որ մեծապէս նպաստել էր նոր պայմանների ստեղծուելուն՝ զգացումը գործի է փոխել. Ենթիսեան հոգեւոր դպրանոցի հիմքը դնելով. Այնուհետեւ նոյն օրինակով ուրիշ դպրանոցներ եւս հիմնուել են եւ Ենթէս Ե.-ի արժանաւոր յաջորդ Գէորգ Դ. մեծ հայրապետը հոգեւոր քարծրագոյն կրթութարան է հիմնել, որ ընդարձակագոյն չափով պէտք է քաւականութիւն տար հոգեւոր կրթութեան պահանջին. — Ինչո՞ւ այդ պահանջը քաւականութիւն չի գտել, ինչո՞ւ հայ եկեղեցականութիւնը եւս է մնացել ժամանակից եւ չի կարողացել մեր ժամանակի քարծրութեան վերայ կանգնած ներկայացուցիչներ հանդէս բերել՝ պարզ է որ պատճառը միայն իւր ծուլութիւնը, ապիկարութիւնը, հակաբարեկրօնական հակումները չեն. քարենորոգում նա կամեցել է եւ ընտրել է դորա համար ամենաուղիղ ծանապարհը. Դրսի քննադատներն եւս ինչքան նոր ծրագիրներ կուզեն կազմեն՝ ուրիշ ծանապարհ ցոյց տալ չեն կարող. արժանաւոր հոգեւորականներ ունենալու դւ նոցանից

եղած պահանջներին ըստականութիւն զանե-
լու համար՝ պէտք է համապատասխան մար-
դիկ կրթել հոգեւոր կրթարաններում:

Մեր հոգեւոր կրթարանները մինչեւ
այժմ՝ ցանկալի մարդիկ չեն տուել նորա հա-
մար: որ հոգեւոր կրթութիւնը խիստ պակաս
է եղել նոցա մէջ՝ պակաս է եղել Քրիստոսի
հոգին: Այն յեղափոխութիւնը, որ մեր դա-
րում՝ սկսուել է հայ ժողովրդի կեանքի մէջ՝
աշխարհական կրթութեամբ է սկսուել: եւ ե-
կեղեցին անկարող լինելով իւր միջից նոր
կեանքի պահանջների համաձայն հոգեւոր
կրթութիւն արտադրելու՝ թոյլ է տուել, որ
հայ անուն կրող եւ հոգեւորականներ պատ-
րաստելու կոչուած դպրոցներում՝ աշխարհա-
կան կրթութիւն իշխէ: Իսկ այսպիսի կրթու-
թեամբ սնուած հրապարակախօսներ եկեղեց-
ւոյ գործունէութիւնը քննադատելով՝ չեն կա-
մեցել եւ չեն կամենում՝ նաեւ այժմ հասկա-
նալ, թէ կորեկ ցանած տեղում՝ ցորեն հնծել
չի կարելի: չեն կամենում՝ հասկանալ մա-
նաւանդ, որ հայ կրթութիւն պահանջել
կրթութեան համար դուռ բանալ չի
նշանակում: եւ մինչեւ հոգեւոր սնունդ չլինի՝
մշմարիտ հոգեւորական չի զարգանայ, Երբ
այս մասին խօսք է լինում: հանդէս են գալիս
միշտ այն անտեղի առարկութիւնները՝ ժողո-
վրդի մէջ ապրելու, ժողովրդին օգտակար ար-
հեստներ սովորելու, ժողովրդի կեանքը ուսում-
նասիրելու մասին: որոնք կարելի է ասել ընդ-
հանուր առմամբ այն անհեթեթ միտքն են ար-
տայայտում, թէ որովհետեւ ժողովրդին աշ-
խարհական է, նորա հովիւն էլ աշխարհական
պէտք է լինի: կարծես ներքին հոգեւոր ուղղու-
թիւնը արգելք է լինում: եւ չի նպաստում ընդ-
հակառակն: ժողովրդին մօտենալու: կարծես
Մայր Աթոռից սկսած ըստ մեր եկեղեցական
հաստատութիւնների մէջ՝ սնուող եւ պաշտօն
վարող ժողովրդի զաւակն աւելի միջոց չունի
իւր ժողովրդի ցաւերը տեսնելու եւ իսկական
կարիքների համար հոգ տանելու: քան որ եւ
հեռու օտար քաղաքում՝ ուսանողը, գրասեղա-
նի մօտ կամ մի մութ նկուղում՝ գինու քաժակն
առաջին ազգային խնդիրները լուծողը, կամ
Բագուի նաւթահորերում՝ աշխատողը, Պէտք
է վերջապէս թողնել այս մոլորութիւնները եւ

լրջութեամբ հետամուտ լինել մեր առաջ
գծած ուղիղ ճանապարհով հարցը լուծելու:
Եթէ մշմարիտ իսկ լինէր, թէ ժողովրդի մէջ
ապրող պատահական մարդկանցից սպասելու
է ժողովրդին օգտակար հոգեւորականներ՝
փորձը ցոյց է տալիս, որ մինչեւ այժմ՝ զուր
ենք սպասել այդպիսիներին: Մնում է կրկին
հոգեւոր դպրոցներում՝ հոգեւորականներ պատ-
րաստել, իսկ դորա համար ամէն ջանք պէտք
է գործ դնել: ամէն միջոց ձեռք առնել, որ
հոգի լինի այլ դպրոցներում: Քրիստոսի հո-
գին, քարոյական կրթութիւն եւ քեղուն քաղ-
մարդկանդակ ուսում: որ նորա ներքուստ եւ
արտաքուստ քարեկարգ եւ անկարօտ վիճակի
մէջ լինին:

Արարատի անցեալ համարում՝ տը-
պուած Վեհափառ Հայրապետի սրբատառ
Կոնդակը ուշադրութիւն է հրաւիրում՝ այս
մտքով աւագագոյն հոգեւոր դպրոցի մեր
Բնիկ Երանգոյն հայ Կրթութիւն վերայ-
թող զօրանայ եւ աճի այդ ուշադրութիւնը
մեր ժողովրդի մէջ, թող քարգաւաճին ճեմա-
րանն ու դպրանոցները եւ միջոց ունենան ըստ
կարելոյն մեծ թուով՝ հոգեւորն քարոզիչներ,
ուսուցիչներ, արթուն հովիւներ եւ դաստիա-
րակներ, զրնով ու խօսքով մշմարտութեան
աւետարանն ու մշմարիտ լուսաւորութիւն տա-
րածող արժանաւոր հոգեւորականներ սնու-
ցանել:— այն ժամանակ շատ հարցեր մի
անգամից լուծուած կլինին, կգտնուին նաեւ
մարդիկ, որոնք կենդանի օրինակով կրկերա-
կենդանացնեն հաւատը մեր ժողովրդի մէջ:

ՄԱՅՐ ԱԹՈՒ.

† Թագաժառանգ Նորին Կայսերական
Բարձրութիւն Գեորգի Աղէքսանդրովի մա-
հուան գոյժը Մայր Աթոռ հասաւ հինգշաբ-
թի, յուլիս մէկին, և իսկոյն Մայր տաճարի
զանգակները տխուր հնչմամբ հրաւիրեցին
Միաբանութեան և աղօթաւոր հասարակու-
թեան մասնակցելու ամբողջ Ռուսաստանի